առաջի պատկերին: Քիչ ատենէն Տիրամօրս հրաշք առ կարօտելոյ և վշտացելոյ՝ 'ի գովաբանութիւն դրդեցին նաև բոլոր քաղաքը առ Երկնից Թագուհին: Այն ժամանակ նաև (1699) ողորմելով Աստուած քրիստոնէից՝ ազատեց զՓոտոլիա յօտարաց լուծէն: . . . Խորհեցան Հայք դառնալ 'ի Կամենից, որպէս զի հանգչեցընեն Տիրամօր պատկերը իւր ընտրած տեղին: Մօտենալով Կամենիցի Հայք, կանգ առին Դլուժքա կոչուած գեղը. վասն զի բարեպաշտ Կամենիցցիք կը փափաքէին պարտ ու պատշաճ յարգութեամբ և փառօք ընդունել Երկնից Թագուհին երկրաւոր խոնարհ բնակարանին մէջ: Անհամար բազմութիւն ժողովրդոց, ազնուականք և ռամիկք, դատաւորք քաղաքին, փառաւորեալ և չքեղ ասպետք՝ դիմաւորեցին Պատկերիս՝ ուրախութեան երգօք և նուագօք, և առաջնորդեցին 'ի քաղաք: Բոլոր քաղաքացիք երկար միջոց թնդացուցին օդը ուրախութեան և գովութեան երգօք, 'ի պատիւ Մարիամու կուսին:

Եւ որովհետև տաճարն, յորում կը պատուուէր Պատկեր Աստուածամօրս 'ի Կամենից, Թուրքաց քաղաքին տիրելէն առաջ, գրեթէ քանդուած էր, այն պատճառաւ դրին զնա 'ի մատրան Աւետման Երանուհւոյ կուսին Մարիամու,[1] որ մօտ է Հայոց եկեղեցւոյն: Քանի որ պատկերս այդ մատրան մէջ էր, միշտ կը լինէին անդ հանդիսաւոր պաշտամունք և քարոզք, որովք հռչակէին հրաշք Պաշտպանիս մերոյ: Աւանդութեամբ գիտենք՝ որ այն միջոցին երաշտութիւնը մեծապէս վտանգած

1. Ըստ Անտոնեի նախ դրած են 'ի մատրան Նախավըկային, և ապա յեկեղեցւոջն Աւետման: